Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 481-Լ հրամանի
Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 32232/2021/ ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան 17/06/2021թ.

1.ԿՈՐՅՈՒՆ ԿՈՐԵԿՅԱՆ
(հարկային իրավախախտում կատարած անձի անունը, ազգանունը, կազմակերպության լրիվ անվանումը, ՀՎՀՀ (առկայության դեպքում)

2.ԵՐԵՎԱՆ,ԵՐԵՎԱՆ,ԲՐՅՈՒՍՈՎ Թ.,69,Շ,20
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. 710310265
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և /կամ/ ՀԾՀ (հայտնի լինելու դեպքում))

4. **Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել**

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից.

1) 31/10/2019 թվականին օտարվել է 07/10/2019 թվականին ձեռք բերված MERCEDES-BENZ C 180 մոդելի 1999 թվականի արտադրության 122 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 100000 ՀՀ դրամ,

2) 07/11/2019 թվականին օտարվել է 07/11/2019 թվականին ձեռք բերված BMW 318 I մոդելի 2001 թվականի արտադրության 117 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 100000 ՀՀ դրամ,

3)15/11/2019 թվականին օտարվել է 15/11/2019 թվականին ձեռք բերված BMW 318 I մոդելի 1999 թվականի արտադրության 118 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 500000 ՀՀ դրամ,

4) 21/11/2019 թվականին օտարվել է 21/11/2019 թվականին ձեռք բերված BMW 316 I մոդելի 1999 թվականի արտադրության 105 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 500000 ՀՀ դրամ,

5) 03/12/2019 թվականին օտարվել է 03/12/2019 թվականին ձեռք բերված OPEL ASTRA 1.6 մոդելի 1998 թվականի արտադրության 75 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 200000 ՀՀ դրամ,

6) 04/12/2019 թվականին օտարվել է 04/12/2019 թվականին ձեռք բերված OPEL ZAFIRA 1.8L մոդելի 2002 թվականի արտադրության 125 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 200000 ՀՀ դրամ,

7) 20/12/2019 թվականին օտարվել է 20/12/2019 թվականին ձեռք բերված OPEL ASTRA 1.6 մոդելի 1999 թվականի արտադրության 75 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 200000 ՀՀ դրամ,

8) 25/12/2019 թվականին օտարվել է 25/12/2019 թվականին ձեռք բերված OPEL ZAFIRA 1.8L մոդելի 2000 թվականի արտադրության 125 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 200000 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (**բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի**) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. մինչև 29.06.2019 թվականի գործող խմբագրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում հարկային տարվա ընթացքում երկրորդ կամ ավելի թվով ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենաների (առաջին, երկրորդ կամ ավելի թվով) և ձեռքբերումը, և օտարվումը տեղի են ունեցել նույն հարկային տարվա ընթացքում:

բ. 29.06.2019 թվականից գործող խմբագրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Ընդ որում, ֆիզիկական անձը ավտոմեքենայի օտարումից եկամտային հարկը պետք է հաշվարկեր ինքնուրույնաբար՝ մինչև 2020 թվականի ապրիլի 20-ը ներառյալ, բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ (ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածով):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձի կողմից վերը նշված հարկվող գործարք(ներ)ի մասով, հարկային մարմին չի ներկայացվել 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել արդյունքում առաջացող հարկային պարտավորությունը:

5. **Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը**

Ֆիզիկական անձի կողմից 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ չներկայացնելու պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եկամտային հարկի հաշվարկման համար հիմք է ընդունվել պայմանագրային արժեքի 1 տոկոսի և ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի ձիաուժ հզորության 150-ապատիկի առավելագույն արժեքը, որը կազմում է ՝ 129300 դրամ [18300+17550+17700+15750+11250+18750+11250+18750]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով, որը կազմում է՝ 21878 դրամ (17/06/2021 թվականի դրությամբ) [129300x0,04%x423]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը 17/06/2021 թվականի դրությամբ կազմում է 151178 դրամ, որից հարկ՝ 129300 դրամ, տույժ՝ 21878 դրամ:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 17/06/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.**Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող**

7.**Ընդամենը՝ ___-___ թերթ**

8.**Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը**

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ **Շահանե Կարապետյան**

Քաղաքացի՝ Կորյուն Կորեկյան
Հասցե՝ ք.Երևան, Բրյուսով թաղ., 69-20
ՀԾՀ՝ 710310265

Ծանուցագիր

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկությունների՝ Ձեր կողմից՝

1. 31. 10. 2019թ. իրականացվել է 07. 10. 2019թ. ձեռքբերված MERCEDES-BENZ C 180 մոդելի 1999թ. Արտադրության 122 ձիաուժ հզորությամբ,
2. 07. 11. 2019թ. իրականացվել է 07. 11. 2019թ.. ձեռքբերված BMW 318 I մոդելի 2001թ. արտադրության 117 ձիաուժ հզորությամբ
3. 15. 11. 2019թ. իրականացվել է 15. 11. 2019թ. ձեռքբերված BMW 318 I մոդելի 1999թ. արտադրության 118 ձիաուժ հզորությամբ,
4. 21. 11. 2019թ. իրականացվել է 21. 11. 2019թ. ձեռքբերված BMW 316 I մոդելի 1999թ. արտադրության 105 ձիաուժ հզորությամբ,
5. 03. 12. 2019թ. իրականացվել է 03. 12. 2019թ. ձեռքբերված OPEL ASTRA 1.6 մոդելի 1998թ. արտադրության 75 ձիաուժ հզորությամբ,
6. 04. 12. 2019թ. իրականացվել է 04. 12. 2019թ. ձեռքբերված OPEL ZAFIRA 1.8L մոդելի 2002թ. արտադրության 125 ձիաուժ հզորությամբ,
7. 20. 12. 2019թ. իրականացվել է 20 12 2019թ. ձեռքբերված OPEL ASTRA 1.6 մոդելի 1999թ. արտադրության 75 ձիաուժ հզորությամբ
8. 04. 12. 2019թ. իրականացվել է 04 12. 2019թ. ձեռքբերված OPEL ZAFIRA 1.8L մոդելի 2000թ. արտադրության 125 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցներիի օտարման գործարքներ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետի՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում, իսկ գույքի օտարումից ստացվող եկամուտներն այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի:

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից 17.06.2021թ. կազմված թիվ 32232/2021/ԿՈԻՎ4/Ա արձանագրության՝ Ձեր կողմից չկատարված հարկային պարտավորությունը 17.06.2021թ. դրությամբ կազմել է կողմից չկատարված հարկային պարտավորությունը 17.06.2021թ. դրությամբ կազմել է**151.178** դրամ, որից հարկ՝ 129.300 դրամ, տույժ՝ 21.878 դրամ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքի առթիվ, ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի նախնական լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և/կամ առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87 ա: Ձներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
հեռ.011 549191 (9148)

. Վ.Ավետիսյան

Քաղաքացի՝ Կորյուն Կորեկյան
Հասցե՝ ք.Երևան, Բրյուսով թաղ., 69-20
ՀԾՀ՝ 710310265

Հարգելի **Կորյուն Կորեկյան**

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված տեղեկությունների՝ Ձեր կողմից՝

1. 31. 10. 2019թ. իրականացվել է 07. 10. 2019թ. ձեռքբերված MERCEDES-BENZ C 180 մոդելի 1999թ. Արտադրության 122 ձիաուժ հզորությամբ,
2. 07. 11. 2019թ. իրականացվել է 07. 11. 2019թ.. ձեռքբերված BMW 318 I մոդելի 2001թ. արտադրության 117 ձիաուժ հզորությամբ
3. 15. 11. 2019թ. իրականացվել է 15. 11. 2019թ. ձեռքբերված BMW 318 I մոդելի 1999թ. արտադրության 118 ձիաուժ հզորությամբ,
4. 21. 11. 2019թ. իրականացվել է 21. 11. 2019թ. ձեռքբերված BMW 316 I մոդելի 1999թ. արտադրության 105 ձիաուժ հզորությամբ,
5. 03. 12. 2019թ. իրականացվել է 03. 12. 2019թ. ձեռքբերված OPEL ASTRA 1.6 մոդելի 1998թ. արտադրության 75 ձիաուժ հզորությամբ,
6. 04. 12. 2019թ. իրականացվել է 04. 12. 2019թ. ձեռքբերված OPEL ZAFIRA 1.8L մոդելի 2002թ. արտադրության 125 ձիաուժ հզորությամբ,
7. 20. 12. 2019թ. իրականացվել է 20. 12 2019թ. ձեռքբերված OPEL ASTRA 1.6 մոդելի 1999թ. արտադրության 75 ձիաուժ հզորությամբ
8. 04. 12. 2019թ. իրականացվել է 04. 12. 2019թ. ձեռքբերված OPEL ZAFIRA 1.8L մոդելի 2000թ. արտադրության 125 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցներիի օտարման գործարքներ:

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից 17.06.2021թ. կազմված թիվ 32232/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ Ձեր կողմից չկատարված հարկային պարտավորությունը 17.06.2021թ. դրությամբ կազմել է **151.178** դրամ, որից հարկ՝ 129.300 դրամ, տույժ՝ 21.878 դրամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով, ինչի վերաբերյալ համապատասխան ծանուցումը Օրենսգրքի 4-րդ հոդվածի 66-րդ կետով և 398-րդ հոդվածի 5. 1-րդ կետով սահմանված կարգով տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական www.azdarar.am ինտերնետային կայքում:

Առաջարկվում է օրենքով սահմանված կարգով վճարել հաշվարկված պարտավորությունը:

Կից՝ 32232/2021/ԿՈՒՎ4/ հաշվարկը և ծանուցումը

ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման
բաժնի գլխավոր մասնագետ Վլադիմիր Ավետիսյան
հեռ.՝ 011-549-191 (9148)